ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

սեպտեմբերի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՎԵՐ ՍԱՖԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԵՎ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացրած «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի օգոստոսի 17-ի №Ե-438-21 գրությունը՝Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնքի Նվեր Սաֆարյան փողոցի և Պետրոս Դուրյան թաղամասի 13-րդ փողոցի խաչմերուկում կառուցված պոմպակայանի սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու նպատակով տեխնիկական պայմաններ տրամադրելու վերաբերյալ,

բ) որ Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնքի մի խումբ բնակիչների կողմից լիազորված անձ Դավիթ Խուդավերդյանի (այսուհետ՝ Դիմող անձ) դիմումի համաձայն՝ որպես առանձին սպառման համակարգ, և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 9-ի №498 տեղեկանքը (այսուհետ՝ Տեղեկանք), որի համաձայն՝ վերջինս չի առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելուն,

դ) Ընկերության 2021 թվականի սեպտեմբերի 8-ի №Ե-505-21 և Դիմող անձի 2021 թվականի սեպտեմբերի 10-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն

առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով միացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Կանոնների 14.4 կետով սահմանված կարգով՝ տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Տեղեկանքը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
սեպտեմբերի 2021թ.